



Սիւսանթո

Դարերու վրեժ

Յոյսերու երկաթէ սանդուխին կատարներէն է որ
աւետիսս կ'արձակեն,
Մոխիրներու, դիակներու եւ վշտերու հովիտներէն է որ
հասայ ի քեզ,
Եւ, աւա՛ղ, քղամիդիս թեզանիքներէն իմ շքեղ ցեղիս
արիւնը ահաւասի՛կ դեռ կը թորայ...
Բայց քայլերս անխոնջ են եւ կանքս գերագոր եւ ձայնս
դաժանօրէն ամեհի...
Գլուխս սուգերէն եւ վրէժէն եւ ճակատագրէն թէեւ
ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դիւցազնի մը աչքերուն չափ
կարմիր եւ կերպարանքս է սոսկատեսիլ:
Իմաստութեանս եւ ցասումիս արեգակին տակ իմ
հուժկու իրանս անկիւնաքար,
Այլեւս չ'ուզեր այդ սնտոյի փառքը յաւերժօրէն իր վրայ
կրել
Եւ պաղատանքի, աղօթքի, լաց ու կոծի եւ ողբի այն
մատեաններուն մէջ,
Ուր դար առ դար իմ սերունդներս իրենց արիւնը եւ
տառապանքն են լացեր,
Մէկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենէ ստրկացում
եւ աղաչանքէ արցունք չերթալու համար...
Եւ մտածումովս եւ գայրոյթովս ձեր ցաւերուն

ամենախոր արմատները չափեցի.

Տեսա՛յ որ ձեր փրկութիւն մութացողի բոսիկ ոտքերն
աւերակներու մոխիրներէն այրեցան...

Տեսա՛յ որ դուք արցունքին մէջ երջանիկ էիք եւ
կենսաբեր կոհիւն դէմ ահաբեկ...

Տեսա՛յ որ արդարութիւնը ստեղծել պէտք էր եւ
ազատութիւնը մոլեգնաբար յափշտակել:

Եւ այսօր, ահաւասի՛կ, իմ անկշռելի բարկութիւնս իր
բոլոր հուրերը վառեց...

«Ահա՛ քեզ ալ կը դիմեն, եկո՛ւ եւ ճամբուս վրայ ոտքի՝
երգէ՛ որ արձակե՛մ,

Ճամբուս վրայ ռազմերգէ՛ որ քինայոյզօրէն եւ առյաւէտ
արձակե՛մ

Իմ հաւատքի գաւկրներուս վայրենալանջ երիվարները
փոթորկապար...

Ըսէ՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեն չորս
ծագերուն դիմաց,

Ըսէ՛, որ թաւալե՛մ ապառաժներուս կոյտերը
անիրաւութեան կուրծքերուն,

Եւ ոտքի հանեն հողիս հրեղէն եւ ըմբոստ մարտիկներուն
հետ,

Քինախնդրութեան եւ սարսափի բանակներուս
արշաւանքն ալ ահեղաշար...

Ըսէ՛, որ շեփորներս հինաւորց հերոսներու հագագովը
շեփորել տամ...

Ըսէ՛, որ երկաթներս կռանեն եւ պողպատներս
շողացնեն,

Ըսէ՛, որ ես ալ իմ արիւնախում նժոյգս շքեղօրէն
թամբեն,

Ըսէ՛, որ անոր սմբակները ձորերէն վեր՝ լեռնէ ի լեռ
միայն կայծեն...

Երգէ՛, ահա, բոլորին արիւնը արեւ է դարձեր եւ

կամքերն ու դաստակներն են պղնձուեր.
Երգէ՛, Եղբայրութիւնը տօնուեցաւ եւ շունչերն ու
հոգիները նոյն դարերու վրէժովը պսակուեցան...
Ահա՛ թափուող արցունքները յե՛տ դարձան եւ
կուրծքերու կոծումը դադրեցաւ,
Ահա՛ բոլորը մէ՛կ, բոլորը մէ՛կ, իմ Գերիշխանի
թելերու տակ յառաջացան.
Արբեցո՛ւր զանոնք դեռ, եթէ կրնաս, եւ արժանաբար
դիցագներգէ զիս, ո՛վ քնարաւոր,
Ես գիտեմ որ քու տաւիղդ Հայրենիքին ծարաւն ունի
ինչպէս վրէժն այնքա՛ն դարերու...
Ուրեմն լարերդ զենիթին շանթերէն յափշտակէ,
տրցակ առ տրցակ,
Բարձրացո՛ւր ձեռքերդ եւ զանոնք գիշերուան
կապոյտներու կամարին կարկառէ՛,
Եւ փառագարդէ գլուխս առաւօտեան աստղերու բոյլով
մը լուսածոր,
Խնկարկէ՛ զիս եւ անմահութեան տաճարներուն էն
փառակերտը կառուցո՛ւր,
Ծնրադրէ՛ եւ պաշտէ՛ զի՛ս ` եւ երբ ժամը հասնի
ողջակիզուէ՛ ինձի համար,
Եւ փշրէ՛ քու հողեղէնի ճակատդ իմ կոթողիս
մարմարներուն դիմաց,
Որովհետեւ. Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս եմ, իմ անունս է
Պայքար եւ վախճանս Յաղթանակ»: